

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻՆՅԱ ՀԱՅԿԻ ՄԻՐԱԿԱՆՑԱՆ

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՄԲ**

Ը. 00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝
Ս. Լ. Ղանթարջյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝
Է. Ն. Օրոյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝
Ա. Ն. Հակոբջանյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-ռուսական
(սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ.-ի հունիսի 17ին, ժամը 15⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցե՝ 0009, ք. Երևան, Արովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2016թ.-ի մայիսի 16-ին:

015 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝



Ա. Ն. Առաքելյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից շուկայական տնտեսությունում կազմակերպությունների կենսունակության ու մրցունակության ապահովումը սահմանափակ ռեսուրսների պայմաններում, առավելագույն արդյունքի հասնելու ձգտումը արագ փոփոխվող արտաքին միջավայրում ճիշտ ձևաչափով և ճկուն ծախսերի կառավարման համակարգի ներդրման լուրջ պահանջարկ է:

Կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման հարցում էապես կարևորվում է կառավարչական որոշումների կայացման համար հիմք հանդիսացող գործունեության բոլոր ուղղությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության նշանակությունը, դրա ամբողջական վերլուծությունը, ինչը հնարավոր է ծախսերի կառավարման համակարգի առկայության դեպքում: Մինչդեռ առողջապահական կազմակերպություններում գործող հաշվառման ավանդական համակարգերը չեն բավարարում համալիր վերլուծությունների համար անհրաժեշտ տեղեկատվական պահանջները, ինչն էլ հաշվառման նոր համակարգի ներդրման լուրջ պահանջարկ է:

Դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսերից սկսվել է առողջապահության համակարգի հետազոտությունների արդյունքների գործնական կիրառման խնդիրների մշակման գործընթացը, մշակվել են առողջապահության տնտեսագիտության գիտական հիմքերը, կյանքի են կոչվել կառավարման տնտեսագիտական մեթոդները՝ փոխարինելով ադմինիստրատիվին՝ առողջապահության ոլորտում զարգացնելով շուկայական հարաբերությունները:

Ծախսերի կառավարման համակարգի վերաբերյալ առկա հետազոտությունները միայն անուղղակի են առնչվում ծախսերի կառավարման տեսական և մեթոդական խնդիրներին, իսկ դրանց գնահատման մեթոդները, կառավարման մեխանիզմները մշակված են ընդհանուր մոտեցումների հիման վրա, սակայն հետազոտությունները, որոնք վերաբերվում են բժշկական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը ծախսերի կառավարման համակարգի ներդրմամբ, դեռևս խիստ սահմանափակ են:

Մինևույն ժամանակ Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի պետության կողմից խիստ սահմանափակ ֆինանսավորման, բնակչության տարեցտարի աճող հիվանդացության և հաշմադնամության անբարենպաստ միտումների պայմաններում՝ առկա ռեսուրսների անարդյունավետ օգտագործման հետ կապված, էապես կարևորվում է առողջապահական կազմակերպությունների կառավարման համակարգում ծախսերի կառավարման համակարգի ներդրման անհրաժեշտությունը:

Վերոնշյալ խնդիրների տեսական և մեթոդական հետազոտության անհրաժեշտությունը որոշում է սույն ատենախոսության արդիականությունը, նպատակը, խնդիրները և առարկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է առողջապահական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացումը ծախսերի գործընթացային կառավարման համակարգի ներդրմամբ:

Նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել և գնահատել առողջապահական կազմակերպություններում գործող ծախսերի կառավարման համակարգերի տեղն ու դերը կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման գործում,

2. վերլուծել և գնահատել առողջապահական կազմակերպությունների ծախսերի կառուցվածքը,

3. ուսումնասիրել և գնահատել առողջապահական կազմակերպություններում ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ստացման, ծախսերի վերաբաշխման, վերլուծության, որոշակի պատասխանատվության կենտրոնի վերագրման և ըստ գործունեության ուղղությունների արդյունավետության գնահատման մեխանիզմները,

4. մշակել և գիտականորեն հիմնավորել մշակված ծախսերի կառավարման համակարգի ներդրման մոտեցումները, մշակել ծախսերի կառավարման համակարգի ձևավորման և ներդրման տեսական ու գործնական առաջարկներ,

5. առողջապահական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով մշակել ծախսերի կառավարման համակարգ առողջապահական կազմակերպությունների առանձնահատկությունների հաշվի առմամբ,

6. տալ ծախսերի կառավարման համակարգի արդյունավետության գնահատականը համակարգի ներդրումից առաջ և հետո ստացված ուսումնասիրության տվյալների համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության առարկան է ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում առողջապահական կազմակերպությունները:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել ծախսերի կառավարման, տնտեսական և բժշկասոցիալական վերլուծությունների, կազմակերպությունների գործունեության բարձրացման հիմնախնդիրներին առնչվող գիտական հետազոտությունների տեսական և մեթոդական դրույթները:

Տեղեկատվական հիմք են հանդիսացել առողջապահական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ ֆինանսատնտեսական և վիճակագրական հաշվետվությունները, ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալները, իրականացված ուսումնասիրության ընթացքում հավաքագրված և մշակված առաջնային նյութը:

Աշխատանքի գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն ամփոփված է հետևյալ արդյունքներում՝

❖ Իրականացվել է առողջապահական կազմակերպությունների գործունեության արդյունավետության ուսումնասիրություն, որի արդյունքում գնահատվել են առողջապահական կազմակերպության գործունեության տնտեսական և բժշկա-

սոցիալական արդյունավետության ցուցանիշների մակարդակներն ու դրանց միտումները:

❖ Բացահայտվել են ծախսերի կառավարման առանձնահատկությունները առողջապահական կազմակերպություններում՝ կապված ծախսերի կառուցվածքի օպտիմալացման, կառուցվածքային ստորաբաժանումների միջև փաստացի ծախսերի վերաբաշխման ճշտության, կոնկրետ ստորաբաժանման վրա ծախսերի վերագրման նպատակայնության, ինքնարժեքի հաշվարկման մոտեցումների, դրամական հոսքերի վերահսկողության և պլանավորման, ծախսերի արդյունավետ կառավարման համակարգի կառուցման հետ:

❖ Մշակվել և գիտականորեն հիմնավորել են ծախսերի գործընթացային կառավարման համակարգի ձևավորման և ներդրման մոտեցումներ, հետազոտության ներդրման արդյունքների համեմատական վերլուծության հիման վրա գնահատվել է ծախսերի գործընթացային կառավարման համակարգի արդյունավետությունը:

Աշխատանքի գիտագործնական նշանակությունը և արդյունքների ներդրումը:

Առողջապահական կազմակերպությունների կառավարման համակարգում էապես կարևորվում են ծախսերի կառուցվածքը, ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ստացման եղանակները: Ծախսերի վերաբաշխման, վերլուծության, որոշակի պատասխանատվության կենտրոնի վերագրման և ըստ գործունեության ուղղությունների արդյունավետության գնահատման մեխանիզմները ճիշտ ձևաչափով ծախսերի կառավարման համակարգի ներդրման լուրջ պահանջարկ են:

Հետազոտության հիմնախնդրին գիտականորեն հիմնավորված լուծում տալու նպատակով մշակվել է ներկայիս տնտեսական պայմաններին համահունչ և ճիշտ ձևաչափով ծախսերի գործընթացային կառավարման համակարգի ներդրման մոտեցումներ, որի արդյունավետության մասին է վկայում առողջապահական կազմակերպություններում դրա ներդրման արդյունքում ստացված համեմատական վերլուծության համալիր գնահատականը:

Մշակված ծախսերի կառավարման համակարգը ներդրվել է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության ընդհանուր կառավարման համակարգի համալրման համար (N 36 08.04.15թ., տես Հավելված):

Ատենախոսության տեսական հիմնական դրույթները ներդրվել են Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի «Հանրային առողջություն» մասնագիտությամբ մագիստրոսների պատրաստման «Առողջապահության տնտեսագիտություն և ֆինանսավորում» առարկայական ծրագրում (N 19/14-15 05.05.15թ., տես Հավելված):

Հրապարակումներ: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են երեք տպագրված աշխատանքներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը շարադրվել է համակարգչային 137 էջում և կազմված է ներածությունից, արդի պայմաններում կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման

հիմնախնդիրների (գրականության տեսություն), ծախսերի կառավարման համակարգի ձևաչափի և ներդրման մոտեցումների, առողջապահական կազմակերպության գործունեության բժշկա-սոցիալական և տնտեսական արդյունավետության գնահատականների գլուխներից, եզրահանգումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից և հավելվածից: Աշխատանքը պարունակում է 19 աղյուսակ և 27 նկար: Գրականության ցանկը ներառում է 142 աղբյուր:

ՄՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, գիտական արդյունքները և գիտական նորությունը, ինչպես նաև՝ հետազոտության արդյունքների տեսական և գործնական կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ «Արդի պայմաններում կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները (գրականության տեսություն)», զլխում ուսումնասիրվել են կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական խնդիրները, կատարվել է գիտական գրականության վերլուծություն:

Բնակչության առողջության վիճակը հասարակության զարգացման և սոցիալ-տնտեսական բարեկեցության օբյեկտիվ չափանիշներից մեկն է: Առողջության ձևավորման գործընթացն ընթանում է հասարակական կյանքի սոցիալական, տնտեսական, քաղաքական, էկոլոգիական գործոնների ուղղակի և անուղղակի ազդեցության պայմաններում, ինչի հետ կապված մեծանում է բժշկա-ժողովրդագրական և տնտեսական ցուցանիշների միջև կապի գիտական վերլուծությունների նշանակությունը:

Սոցիալ-տնտեսական և բժշկա-ժողովրդագրական առկա իրավիճակում Հայաստանի Հանրապետությունում հատուկ նշանակություն են ձեռք բերել առողջապահական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, կառավարման համակարգի բարեփոխումներին նվիրված հետազոտությունները: Հատկապես առողջապահական կազմակերպությունների տնտեսական և բժշկա-սոցիալական արդյունավետության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բժշկական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացման հարցում առաջնային է կառավարման համակարգի դերն ու նշանակությունը (Кадыров Ф.Н., 2007):

Ժամանակակից բժշկա-դեմոգրաֆիական գործընթացները բնորոշվում են խիստ բացասական միտումներով՝ բնակչության թվաքանակի կրճատմամբ, ծերացմամբ, առաջնակի և ընդհանուր հիվանդացության ու հաշմանդամության մակարդակների աճով, որը սահմանափակ ռեսուրսների պայմաններում մեծապես ուժեղացնում է առողջապահական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման պահանջները, ինչը համակարգի նպատակայնության և կառավարելիության մասնակի կամ ընդհանուր կորստի ռիկս է: Մինչդեռ, կազմա-

կերպություններում առկա ավանդական հաշվառման համակարգը չի համապատասխանում շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների առջև ծառայած այնպիսի կարևորագույն խնդիրների լուծման պահանջներին, ինչպիսիք են ծախսերի վերաբերյալ տեղեկատվության հավաստիությունը և ճիշտ ժամանակին լինելը, դրանց վերլուծությունը, որոշակի պատասխանատվության կենտրոնի վերագրումը, ինքնարժեքի ճշգրիտ հաշվարկումը, գործունեության ուղղությունների և կազմակերպության ընդհանուր գործունեության արդյունավետության գնահատումը, որոնք որոշիչ են ժամանակակից շուկայական տնտեսությունում կազմակերպության մրցունակության ապահովման գործում (Drury C., 2007):

Ատենախոսության երկրորդ՝ «Ծախսերի կառավարման համակարգի ձևաչափի և ներդրման մոտեցումները», գլխում ներկայացվել են ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ստացման, ծախսերի վերաբաշխման, վերլուծության, որոշակի պատասխանատվության կենտրոնի վերագրման և ըստ գործունեության ուղղությունների արդյունավետության գնահատման մեխանիզմները, մշակվել և գիտականորեն հիմնավորել է ծախսերի կառավարման համակարգի ներդրման փուլերի հաջորդականությունը, մշակվել են ծախսերի կառավարման համակարգի ձևավորման և ներդրման տեսական ու գործնական առաջարկներ՝ առողջապահական կազմակերպությունների առանձնահատկությունների հաշվի առմամբ:

Ծախսերի կառավարման արդյունավետ համակարգ կառուցելու գործում էական է ճիշտ ժամանակին կազմակերպության գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ հավաստի տեղեկատվության ստացման նշանակությունը, որը հնարավոր է պատշաճ մակարդակի հաշվառման համակարգի միջոցով: Համակարգի մշակման հետ կապված անհրաժեշտ է նախ որոշել կազմակերպության ծախսերի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները, որը կարելի է իրականացնել փաստացի և պլանային մեթոդներով, խմբավորել ծախսերը ըստ տնտեսագիտական բաղադրիչների, հաշվառման հոդվածների, առաջացման կենտրոնների և գործընթացների և ապա անհրաժեշտ է մշակել հաշվային պլանի և կառավարչական հաշվետվությունների տիպային ձևեր: Ընդ որում, որքան մանրամասն և բազմատարր է ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը, այնքան բարձր է դրանց հիման վրա կայացվելիք կառավարչական որոշումների արդյունավետությունը:


Ծախսերի կառավարման ապահովման և կառավարման խնդիրներն առանձնացվում են՝ հաշվի առնելով ծախսերի կառավարման համակարգի բազմատարրությունն ու բարդությունը, ինչը ենթադրում է անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում և մշակում, ծախսերի կառավարման տարբեր սցենարների մշակում և ծախսերը նվազեցնելու նպատակով կառավարչական ազդեցությունների իրագործում: Առանձնացվում են ծախսերի կառավարման համակարգի առանցքային բաղադրիչները՝ ծախսերի կառավարման կազմակերպական կառուցվածքը, ծախսերի կառավարման համակարգի գործընթացները և մոտեցումները: Պետք է նշել, որ ծախսերի կառավարման համակարգի օբյեկտների առանձնացմամբ հնարավոր է բացահայտել դրանցից յուրաքանչյուրին առնչվող խնդիրները. մասնավորապես, ապրանքի ֆունկցիոնալ հատկությունների դեպքում

հիմնական խնդիրը ապրանքի կյանքի ցիկլի հաջողական փուլերի վերաբերյալ ծախսերի վերաբերյալ ճիշտ կանխատեսումներ կատարելն է, արտադրության տեխնոլոգիայի հետ կապված՝ որոշակի տեխնոլոգիային համապատասխան ռեսուրսների ապահովումը, ռեսուրսներով հագեցվածության հետ կապված՝ ռեսուրսներ ներգրավելու և դրանք փոխարինելու ծախսերի գնահատումը, բիզնես գործընթացների և կառավարման համակարգերի հետ կապված՝ բիզնես գործընթացների ձևավորման, վերակառուցման և կառավարման համակարգի վերակառուցման հաշվին ծախսերի նվազեցումը, կազմակերպական կառուցվածքի հետ կապված՝ կառուցվածքի ձևավորումը և կազմակերպության վերակազմակերպումը: Ընդ որում, տվյալ մոտեցումները հնարավորություն են ընձեռում իրականացնել միաժամանակ մի քանի վերլուծություններ՝ ծախսերի հաշվառում ըստ գործության տեսակների, արժեքային շղթայի վերլուծություն՝ հիմնված ապրանքի շարժի, ֆունկցիոնալ արժեքային գնահատականի վրա և այլն:

Ներկայացվել է ծախսերի կառավարման համակարգի ձևավորման մեխանիզմ, որն ենթադրում է կառավարման համակարգի ներդրման թիմի ձևավորում, ծախսերի կառավարման առկա համակարգի վիճակի գնահատում, ծախսերի կառավարման բոլոր պարամետրերի հնարավորությունների գնահատում, կառավարվող պարամետրերի ամբողջության փորձագիտական գնահատում, կազմակերպության գործունեության արդյունավետության գնահատման չափանիշների մշակում, կազմակերպության ֆինանսատնտեսական մեխանիզմների մշակում, կիրառում, անհրաժեշտ ճշտումների իրականացում, կառավարվող պարամետրերի գնահատում, ծախսերի կառավարման նախընտրելի պարամետրերի մշակում, կազմակերպության կառավարելիության աստիճանի գնահատում, կազմակերպության զարգացման անհրաժեշտ քանակի սցենարների գնահատում, զարգացման սցենարի ընտրություն, ծախսերի կառավարման ապահովման ստորաբաժանման մշակում, ծախսերի կառավարման գործընթացների ձևավորում, ծախսերի վերահսկման հաշվառման համակարգի մշակում, ծախսերի կառավարում, ծախսերի կառավարման առկա համակարգի վիճակի գնահատում: Պետք է նշել, որ ծախսերի կառավարման համակարգի ներդրման հաջողությունը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են կազմակերպության բարձրագույն ղեկավարության օժանդակությունը, կազմակերպության ֆինանսական ռեսուրսների ճիշտ օգտագործումը, համակարգի ներդրման համար համապատասխան թիմի առկայությունը և դրա անհրժեշտ շահադրդումը, կոնկրետ խնդիրների լուծման համար անհրաժեշտ կառավարչական հաշվետվությունների ձևավորումը, համակարգը՝ կազմակերպության գործունեության պլանավորման անբաժանելի մաս դարձնելը, ստացված արդյունքների ճիշտ կիրառումը և այլն:

Ծախսերի կառավարման համակարգի արդյունավետ գործելու ժամանակահատվածը մեծապես կախված է համակարգի՝ կազմակերպության նպատակներին ու խնդիրներին համապատասխանությունից և դրա հանդեպ հսկողության անընդհատությունից: Ինչպես կազմակերպության ընդհանուր, այնպես

Էլ ծախսերի կառավարումն իրականացվում է երկարաժամկետ (ռազմավարական) և կարճաժամկետ (ընթացիկ) կտրվածքներով:




Նկար 1: Ծախսերի կառավարման մեխանիզմը

Հարկ է ընդգծել, որ ծախսերի կառավարումն արդյունավետ է միայն ֆինանսական պլանավորման համակարգի հետ սերտ կապի պարագայում, որն իր հերթին հիմք է հանդիսանում պատասխանատվության կենտրոնների կառուցվածքի դուրս բերման համար՝ պահպանելով դրանց տեխնոլոգիական փոխկապակցվածությունը: Քանի որ պատասխանատվության կենտրոնների առանձնացմամբ ծախսերի կառավարման համակարգի կազմակերպումը ենթադրում է կառավարման մեջ դրանց հարաբերական անկախություն, հետևաբար ծախսերի ընթացիկ կառավարման բրնկի գործառնությի ձևավորման համար որպես բազա է ծառայում առողջապահական կազմակերպության պատասխանատվության կենտրոնների կառուցվածքը: Պատասխանատվության կենտրոններում ծախսերի կառավարման նպատակն է դիտարկվող կենտրոնի ծախսերի և եկամուտների

վերաբերյալ տվյալների պլանավորումը և հավաքագրումը, ինչը հնարավորություն է ընձեռում վերահսկել ստորաբաժանումների ծախսերն ու եկամուտները և ֆիքսել դրանց աշխատանքի արդյունքները: Կախված այն հանգամանքից, թե ինչ արդյունքով է վերահսկվում ստորաբաժանման հիմնական պատասխանատվությունը, որոշվում է դրա պատկանելիությունը այս կամ այն պատասխանատվության կենտրոնին:

Հարկ է ընդգծել, որ առողջապահական կազմակերպությունների ծախսերի կառավարման մեխանիզմի կառուցումը (նկ. 1) իրականացվել է կառավարման օբյեկտների և սուբյեկտների փոխկապակցվածության հաշվի առնմամբ, ինչը թույլ է տալիս իրականացնել ծախսերի համալիր վերլուծություն, որի շնորհիվ հնարավոր է հայտնաբերել սահմանված պլանների և ստացված փաստացի արդյունքների շեղումները և բացահայտել դրանց պատճառները:

Վերոնշյալի հաշվի առնմամբ ատենախոսության մեջ ներկայացվել են առողջապահական կազմակերպությունների ծախսերի կառավարման առաջարկներ, որոնք ձևավորվել են փուլեր-խնդիրներ շղթայի հիման վրա՝ կարևորելով հիմնական և օժանդակ ստորաբաժանումների առանձնացումը, դրանց մասնակցությունը ծախսերի բաշխմանը, յուրաքանչյուր գործունեության տեսակին ծախսերի վերագրումը (նկ. 2):



Նկար 2: Ծախսերի կառավարման համակարգի ներդրման փուլերն ու խնդիրները

Ատենախոսության երրորդ՝ «Առողջապահական կազմակերպության գործունեության բժշկա-սոցիալական և տնտեսական արդյունավետության գնահատականները», գլխում տրվել է մշակված ծախսերի կառավարման համակարգի արդյունավետության գնահատականը համակարգի ներդրումից առաջ և հետո ստացված տնտեսական ու բժշկա-սոցիալական տվյալների համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա, ըստ որի ծախսերի կառավարման համակարգի ներդրման արդյունքում դրական որակական փոփոխություններ են գրանցվել առողջապահական կազմակերպության արդյունավետությունը բնութագրող թե՛ բժշկա-սոցիալական, և թե՛ տնտեսական ցուցանիշների դինամիկայում:

Ուսումնասիրվել և գնահատվել են հաճախումների, պետական պատվերի շրջանակներում և վճարովի սկզբունքով մատուցվող բժշկական ծառայությունների, մահաբերության վերաբերյալ պաշտոնական տվյալները («Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի օրինակով): Այսպես, եթե «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի ներկայացրած տարեկան հաշվետվության տվյալների համաձայն բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծառայություններ ստանալու համար 2009թ.-ին առողջապահական կազմակերպություն դիմել են 23662 անձ, ապա հաճախումների թվաքանակը տարեցտարի նվազել է և 2011թ.-ին կազմել 20593, մինչդեռ ծախսերի կառավարման համակարգի ներդրումից հետո հաճախումների թվաքանակը սկսել է աճել և 2014թ.-ին դրսևորվել 26127 մակարդակում, որը նկատելի բարձր է 2011թ.-ի համեմատությամբ:

Փոփոխություններն ակնհայտ են պետական պատվերի շրջանակներում և վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ ամփոփ տվյալներում (աղ. 1), ըստ որի դիտարկման 2009-2011թթ.-ին ուսումնասիրվող ցուցանիշը յուրաքանչյուր նախորդ տարվա նկատմամբ գրանցվելով կայուն նվազման տեմպերով և վիճակագրորեն հավաստի ավելի ցածր արժեքներով 2011թ.-ին դրսևորվել է 1764,68 մակարդակում (2009թ.-ի նկատմամբ t=-16,32):


Աղյուսակ 1

Պետական պատվերի շրջանակներում և վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ ամփոփ տվյալներ


Տարի	N	n	P, ‰	±m	t -ի փոփոխությունները՝ նկատմամբ		
					նախորդ տարի	2009թ.	2011թ.
2009	23662	10431	4408,33	133,45	-	-	-
2010	21122	9672	4579,11	143,83	0,87	0,87	-
2011	20593	3634	1764,68	91,75	-16,50	-16,32	-
2012	21982	11484	5224,27	150,08	19,67	4,06	19,67
2013	24497	13088	5342,70	143,68	0,57	4,76	20,99
2014	26127	13998	5357,68	139,31	0,07	4,92	21,54

Մինչդեռ, ծախսերի կառավարման համակարգի ներդրման արդյունքում 2012թ.-ից ի վեր ցուցանիշի մակարդակը տարեցտարի հավաստիորեն աճելով 2014թ.-ին կազմել է 5357,68: Այսպիսով, համեմատական վիճակագրական վերլուծության արդյունքները վկայում են, որ պետական պատվերի շրջանակներում ու վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ հաշվարկված ինտենսիվ ընդհանուր ցուցանիշը 2012թ.-ից ի վեր, հետագա բոլոր տարիներին 2011թ.-ի մակարդակի նկատմամբ լինելով ավելի բարձր, 2012-2014թթ.-ին այն գերազանցել է 2,96-3,04 անգամ: Ընդ որում, դրական որակական փոփոխությունների արժանահավատության մասին փաստում են Ստյուդենտի գործակցի արժեքները (2012-2014թթ. $t=19,67; 20,99; 21,54$ ՝ համապատասխանաբար) (Гланц.С., 1999):

Բժշկական հիմնարկի գործունեության արդյունավետության գնահատման տեսանկյունից նպատակահար ենք գտել տարանջատել պետական պատվերի շրջանակներում և վճարովի սկզբունքով մատուցված ծառայությունների վերաբերյալ տվյալները (նկ. 3, 4):



Նկար 3: Վճարովի բժշկական ծառայությունների վերաբերյալ ամփոփ տվյալներ



Նկար 4: Պետ. պատվերի շրջ. մատուց. բժշ. ծառ. վերաբերյալ ամփոփ տվյալներ

Այսպես, համաձայն վերլուծության արդյունքների 2009-2011թթ.-ին վճարովի բժշկական ծառայությունների վերաբերյալ հաշվարկված ինտենսիվ ցուցանիշը դրսևորելով խիստ անկման միտումներ 2009թ.-ի (1196,86) համեմատությամբ 2011թ.-ին գրանցվել է 2,2 անգամ ցածր մակարդակում (554,07; $t=-4,70$): Պետք է նշել, որ ծախսերի կառավարման համակարգի ներդրման արդյունքում ուսումնասիրվող ցուցանիշի մակարդակը դրսևորվել է կայուն դրական աճի տեմպերով և վիճակագրորեն հավաստի ավելի բարձր արժեքներով ու 2014 թ.-ին հավասարվել 1607,92-ի ($t=11,28$): Այսպիսով, հետագոտության արդյունքները փաստում են, որ վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ հաշվարկված ինտենսիվ ցուցանիշը 2012թ.-ից ի վեր, հետագա բոլոր տարիներին

2011թ.-ի մակարդակի նկատմամբ լինելով ավելի բարձր, 2012-2014թթ.-ին այն գերազանցել է 2,88-3,07 անգամ:

Ուսումնասիրվել են նաև պետական պատվերի շրջանակներում մատուցված ծառայությունների վերաբերյալ առանձին տվյալները, համաձայն որի 2009-2011թթ. ժամանակահատվածում ուսումնասիրվող ցուցանիշի մակարդակը դրսևորել է խիստ բացասական տատանումներ. եթե 2009թ.-ին այն եղել է 3211,48, ապա 2011թ.-ին ելակետային տարիների համեմատությամբ էական տատանումներով ($t=-14,54$) հայտնվել է խիստ ցածր մակարդակում և կազմել 1210,61: Անհրաժեշտ է ընդգծել, որ արտաքին գործոնով պայմանավորված որակական դրական փոփոխություններն ակնհայտ են նաև վերոնշյալ ցուցանիշի համեմատական վերլուծության տվյալներում. 2014թ.-ին 2011թ.-ի նկատմամբ էական տատանումներով ($t=18,13$) դրսևորվել է խիստ բարձր՝ 3749,76 մակարդակում: Այսպիսով, հետազոտության արդյունքները փաստում են, որ պետական պատվերի շրջանակներում մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ հաշվարկված ինտենսիվ ցուցանիշը 2012թ.-ից ի վեր, հետագա բոլոր տարիներին 2011թ.-ի մակարդակի նկատմամբ լինելով ավելի բարձր, 2012-2014թթ.-ին այն գերազանցել է 2,91-3,10 անգամ:

Բժշկական հիմնարկի գործունեության արդյունավետության գնահատման բժշկա-սոցիալական լուրջ ինդիկատոր է մահաբերության ընդհանուր ցուցանիշը: Ըստ հետազոտության տվյալների ուսումնասիրվող ցուցանիշի մակարդակը 2009-2011թթ.-ին ոչ էական տատանումներով 2011թ.-ին հայտնվել է 294,27 մակարդակում, որը նկատելի ($t=2,06$) բարձր է 2009թ.-ի ելակետային արժեքի նկատմամբ: Մինչդեռ, 2012թ.-ից ի վեր՝ 2011թ.-ի մակարդակի նկատմամբ ոչ էական տատանումներով նվազելով, ուսումնասիրվող ցուցանիշը 2014թ.-ին հայտնվել է 183,34 մակարդակում, որը հավաստիորեն ցածր է 2011թ.-ի համեմատությամբ ($t=-2,41$): Հարկ է ընդգծել, որ բերված համեմատական վիճակագրական վերլուծության տվյալները փաստում են, որ մահաբերության ընդհանուր ցուցանիշը 2012թ.-ից ի վեր, հետագա բոլոր տարիներին 2011թ.-ի մակարդակի նկատմամբ եղել է ցածր՝ 0,87-0,62 անգամ:

Այսպիսով, վերոնշյալ վիճակագրական վերլուծության տվյալները և դրանց գնահատման արդյունքները վկայում են դիտարկման ժամանակահատվածում՝ կապված ծախսերի կառավարման համակարգի ներդրման հետ, բժշկա-սոցիալական արդյունավետության մասին փաստող ցուցանիշների դրական որակական փոփոխությունների մասին:

Առողջապահական կազմակերպության կառավարման համակարգի լուրջ գնահատականներ են տնտեսական արդյունավետության ցուցանիշները (Drake P.P., Fabozzi F.J., 2008; Bragg S.M., 2012): Էական է ծախսերի կառավարման համակարգի նշանակությունը կազմակերպության գործունեության իրացվելիության բարձրացման գործում, ինչի հետ կապված ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել կազմակերպության ընթացիկ ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տվյալները 2009-2013թթ. ժամանակահատվածում: Գործունեության տնտեսական գնահատման տեսանկյունից կարևորագույն ցուցանիշ է ընթացիկ ակտիվների և պարտավորությունների հարաբերությունը՝ ընթացիկ

իրացվելիության ցուցանիշը, և ըստ վերլուծության արդյունքների դիտարկման 2011-2013թթ.-ին ընթացիկ իրացվելիության ցուցանիշը ենթարկվել է խիստ բարենպաստ փոփոխությունների՝ գրանցվել է զգալի դրական տեղաշարժ՝ 2013թ.-ին այն կազմել է 1,58, 2011թ.-ի 1,00 և 2009 թ.-ի 0,40 արժեքների համեմատությամբ:

Ըստ հետազոտության տվյալների էականորեն բարձրացել է զուտ շրջանառու կապիտալի մակարդակը. եթե 2011թ.-ին այն եղել է 219 հազար դրամ, ապա 2013թ.-ին նկատելի բարձրացել է՝ կազմելով 182986 հազար դրամ, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը իր առջև դրված պարտավորությունները մարելուց զատ ունի լրացուցիչ միջոցներ գործունեությունն ընդլայնելու համար: Ընդ որում, դրական համբավի, ինչպես նաև բազմապլանային բարդ աշխատանքի շնորհիվ կազմակերպությանը 2013թ.-ին հաջողվեց ներգրավել վարկային միջոցներ 344055 հազար դրամ չափով: Դրական տեղաշարժեր են տեղի ունեցել նաև արագ և բացարձակ իրացվելիության ցուցանիշների դինամիկայում. եթե արագ իրացվելիության ցուցանիշը 2011թ.-ին եղել է 0,12, ապա 2013թ.-ին այն աճելով կազմել է 1,16, բացարձակ իրացվելիության ցուցանիշը 2013 թ.-ին կազմել է 0,74 2011թ.-ի 0,44-ի դիմաց: Այսպիսով, ըստ ներկայացված համեմատական վերլուծության տվյալների՝ 2011թ.-ից ի վեր դրական միտումներ են արձանագրվել կազմակերպության իրացվելիության բոլոր ցուցանիշների շարժում:

Ըստ ակտիվներում և պարտավորություններում արձանագրված դրական փոփոխությունների լուծվել է կազմակերպության 2009-2011թթ.-ի աուդիտորական եզրակացություններում արձանագրված պարտքային ռիսկերի կառավարման հետ կապված խիստ կարևոր խնդիրն, ինչն էլ կազմակերպության գործունեության սոստեսական արդյունավետության բարձրացման վերաբերյալ լուրջ փաստարկ է:

Ծախսերի կառավարման համակարգի ներդրման հետ կապված էական դրական փոփոխություններ են տեղի ունեցել կազմակերպության մի շարք եկամտային և ծախսային հոդվածներում, մասնավորապես՝ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից մուտքերը 2013թ.-ին ավելացել են 7,8%-ով, ինչը նշանակում է, որ կազմակերպությունում էապես ավելացել է մատուցվող ծառայությունների ծավալը և որպես ծառայությունների մատուցման մուտքերի ավելացման հետևանք՝ լուրջ փոփոխություններ են արձանագրվել նաև աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով ծախսեր, վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից, վճարումներ բյուջեի հոդվածներում:

Դրական տեղաշարժեր են գրանցվել նաև կազմակերպության շահութաբերության բոլոր՝ վաճառքի (return on sales՝ ROS), սեփական կապիտալի (return on shareholders՝ equity՝ ROE), շրջանառու ակտիվների (return on current assets՝ RCA), ոչ շրջանառու ակտիվների (return on fixed assets՝ RFA) և ներդրումների (return on investment՝ ROI) ցուցանիշների դինամիկ փոփոխությունների շարքում. վաճառքի շահութաբերության ցուցանիշի մակարդակը 2013թ.-ին դրսևորվել է 4,22% մակարդակում, որը ելակետային՝ 2011թ.-ի (3,31%) նկատմամբ լինելով ավելի բարձր այն գերազանցել է 1,27 անգամ, ինչը վկայում է, որ 2013թ.-ին զուտ շահույթի և

իրացումից հասույթի հարաբերությունը 2011թ.-ի համեմատությամբ եղել է առավել արդյունավետ մակարդակում (աղ. 2):

Աղյուսակ 2

Շահութաբերության ցուցանիշների փոփոխությունները 2009-2013թթ ժամանակահատվածում

տարի	ROS	փոփոխությունները				ROE	փոփոխությունները			
		նախ. տար. նկ.		2011թ.-ի նկ.			նախ. տար. նկ.		2011թ.-ի նկ.	
		US, %	ԲԱՑ, %	US, %	ԲԱՑ, %		US, %	ԲԱՑ, %	US, %	ԲԱՑ, %
2009	10,75	-	-	-	-	45,84	-	-	-	-
2010	5,79	53,86	-46,14	-	-	25,36	55,32	-44,68	-	-
2011	3,31	57,17	-42,83	-	-	18,00	70,98	-29,02	-	-
2012	4,54	137,16	37,16	137,16	37,16	21,64	120,22	20,22	120,22	20,22
2013	4,22	92,95	-7,05	92,95	27,49	20,98	96,95	-3,05	96,95	16,56
միջին	5,72	85,29	-14,72	115,06	32,33	26,36	85,87	-14,13	108,59	18,39

Սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշը 2013թ.-ին գրանցվել է 20,98% արժեքով, որը 2011թ.-ի ելակետային մակարդակի (18,00%) նկատմամբ բարձր է 1,17 անգամ վկայելով 2011թ.-ի համեմատությամբ 2013թ.-ին կազմակերպության սեփական կապիտալի առավել արդյունավետ օգտագործման մասին:

Պետք է նշել, որ շրջանառու ակտիվների շահութաբերության ցուցանիշը նվազել է, ինչը բացատրվում է ընդհանուր ակտիվներում ընթացիկ ակտիվների մասնաբաժնի ավելացմամբ: Մինչդեռ, նկատելի բարձրացել է ոչ շրջանառու ակտիվների շահութաբերության ցուցանիշի մակարդակը՝ 2013թ.-ին գրանցվելով 12,30% արժեքով, որը 2011թ.-ի ելակետային մակարդակի (7,91%) նկատմամբ բարձր է 1,55 անգամ (աղ. 3):

Աղյուսակ 3

Շահութաբերության ցուցանիշների փոփոխությունները 2009-2013թթ ժամանակահատվածում

տարի	RCA	փոփոխությունները				RFA	փոփոխությունները			
		նախ. տար. նկ.		2009թ.-ի նկ.			նախ. տար. նկ.		2009թ.-ի նկ.	
		US, %	ԲԱՑ, %	US, %	ԲԱՑ, %		US, %	ԲԱՑ, %	US, %	ԲԱՑ, %
2009	105,86	-	-	-	-	22,01	-	-	-	-
2010	56,41	53,29	-46,71	-	-	12,90	58,61	-41,39	-	-
2011	31,16	55,24	-44,76	-	-	7,91	61,32	-38,68	-	-
2012	40,95	131,42	31,42	131,42	31,42	13,47	170,29	70,29	170,29	70,29
2013	18,68	45,62	-54,38	45,62	-40,05	12,30	91,31	-8,69	91,31	55,50
Միջին	50,61	71,39	-28,61	88,52	-4,32	13,72	95,38	-4,62	130,80	62,90

Այդուհանդերձ, շրջանառու և ոչ շրջանառու ակտիվների շահութաբերության ցուցանիշների արժեքները փաստում են, որ կազմակերպության ակտիվները առավել արդյունավետ օգտագործվել են 2013թ.-ին, քան 2011թ.-ին:

Ըստ հետազոտության տվյալների ներդրումների շահութաբերության ցուցանիշի մակարդակը (աղ. 4) 2011թ.-ի նկատմամբ բարձրացել է 1,25 անգամ՝ վկայելով կազմակերպության սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների օգտագործման արդյունավետությանը բարձրացման մասին:

Աղյուսակ 4

Շահութաբերության ցուցանիշների փոփոխությունները 2009-2013թթ ժամանակահատվածում

տարի	ROI	փոփոխությունները			
		նախորդ տարվա նկատմամբ		2011թ.-ի նկատմամբ	
		ԱՏ, %	ԲԱՅ, %	ԱՏ, %	ԲԱՅ, %
2009	31,77	-	-	-	-
2010	18,26	57,48	-42,52	-	-
2011	7,91	43,32	-56,68	-	-
2012	13,07	165,23	65,23	165,23	65,23
2013	9,92	75,90	-24,10	75,90	25,41
միջին	16,19	85,48	-14,52	120,57	45,32

Այսպիսով, բերված դինամիկ պատկերից ակնհայտ է, որ 2013թ.-ին առկա է շահութաբերության մակարդակի աճ 2011թ.-ի նկատմամբ, ինչը կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացման գործում ծախսերի կառավարման համակարգի ներդրման և դրա հետևանքների դրական ազդեցության վերաբերյալ լուրջ փաստարկ է:

Պետք է նշել, որ դիտարկման ժամանակահատվածում բարձրացել է կազմակերպության հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակը (աղ. 5). 2011թ.-ին այն եղել է 2,39, իսկ 2013թ.-ին՝ 2,92-ի:

Աղյուսակ 5

Հիմնական միջոցների շրջանառության ցուցանիշի փոփոխությունները 2009-2013թթ.

տարի	FAT	փոփոխությունները			
		նախորդ տարվա նկատմամբ		2011թ.-ի նկատմամբ	
		ԱՏ, %	ԲԱՅ, %	ԱՏ, %	ԲԱՅ, %
2009	2,05	-	-	-	-
2010	2,23	108,78	8,78	-	-
2011	2,39	107,17	7,17	-	-
2012	2,96	123,85	23,85	123,85	23,85
2013	2,92	98,65	-1,35	98,65	22,18
միջին	2,51	109,61	9,61	111,25	23,02

Այսպիսով, դիտարկման ժամանակահատվածում մինչ ծախսերի կառավարման համակարգի ներդրումը և դրանից հետո ստացված բժշկա-սոցիալական և տնտեսական ցուցանիշների համեմատական վերլուծության տվյալները և դրանց գնահատման արդյունքները հավաստիորեն վկայում են մշակված և գիտականորեն հիմնավորված ծախսերի կառավարման համակարգի արժանահավատության մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետազոտության արդյունքները վկայում են առողջապահական կազմակերպություններում ծախսերի կառավարման համակարգի և առաջադրված նպատակների անհամապատասխանության մասին՝ կապված գործունեության արդյունավետության բարձրացման հետ:
2. Հետազոտության արդյունքները վկայում են առողջապահական կազմակերպություններում
 - ❖ լիարժեք և ճիշտ ժամանակին ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ոչ բավարար մակարդակի,
 - ❖ ծախսերի վերաբաշխման արդյունավետ մեխանիզմների բացակայության,
 - ❖ ծախսերի վերաբերյալ խորը և բազմակողմանի վերլուծությունների բացակայության,
 - ❖ որոշակի պատասխանատվության կենտրոնի ծախսերի վերագրման բացակայության,
 - ❖ ըստ գործունեության ուղղությունների արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայության մասին:
3. Հետազոտության արդյունքները վկայում են կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման խնդրում կառավարման համակարգի բարեփոխումների անհրաժեշտության մասին՝ կապված ծախսերի կառավարման համակարգի մշակման և դրա ներդրման գիտականորեն հիմնավորված մոտեցումների հետ:
4. Ներկայումս առողջապահական կազմակերպությունների ֆինանսական սահմանափակ ռեսուրսները բնակչության հիվանդացության խիստ անբարենպաստ միտումների պայմաններում վկայում են կազմակերպությունների կառավարման համակարգում ժամանակակից պահանջներին համապատասխան գիտականորեն հիմնավորված նոր մոտեցումներով համակարգված ծախսերի կառավարման համակարգի ներդրման անհրաժեշտության մասին:
5. Հետազոտության մեջ գիտականորեն հիմնավորվել է մշակված և առողջապահական կազմակերպությունում ներդրված ծախսերի կառավարման համակարգի արդյունավետությունը, որի մասին փաստում են բոլոր դիտարկված հատկանիշներով համեմատական վերլուծության գնահատման արդյունքների հավաստի դրական որակական փոփոխությունները.
 - ❖ բնակչության հաճախումների, պետական պատվերի շրջանակներում և վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայությունների, մահաբերության վերաբերյալ տվյալների վիճակագրորեն հավաստի բարենպաստ միտումները,
 - ❖ իրացվելիության, շահութաբերության, գործարար ակտիվության վերաբերյալ ցուցանիշների մակարդակի բարձրացումը:

ԳՈՐԾԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք կազմակերպությունների կառավարման համակարգում ներդնել մշակված և գիտականորեն հիմնավորված ծախսերի կառավարման համակարգը:
2. Առողջապահական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք կազմակերպությունների կառավարման համակարգում ներդնել հատուկ մշակված և գիտականորեն հիմնավորված ծախսերի կառավարման համակարգը՝ առողջապահական կազմակերպությունների առանձնահատկությունների հաշվի առնմամբ:
3. Կարևորելով ծախսերի կառավարման նշանակությունը կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման հարցում առաջարկում ենք գործարար կառավարման մագիստրոսների պատրաստման կրթական ծրագրերը համալրել մշակված ծախսերի կառավարման համակարգի բովանդակության և ներդրման մոտեցումների հիմնական տեսական դրույթներով:
4. Առաջարկում ենք առողջապահական կազմակերպություններում ժամակակալից պայմաններին համապատասխան կառավարում իրականացնելու նպատակով մշակված ծախսերի կառավարման համակարգի բովանդակության և ներդրման մոտեցումների հիմնական տեսական դրույթները ներառել առողջապահության կազմակերպիչների պատրաստման կրթական ծրագրերում:

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում:

1. Սիրականյան Լ.Ն. Կառավարչական հաշվառումը որպես ինքնուրույն հայեցակարգ// ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012. - Երևան, 2013. – էջ. 376-383
2. Սիրականյան Լ.Ն. Ծախսերի վերաբաշխումը բժշկական հաստատությունների կառավարման գործընթացում// Բժշկություն գիտություն և կրթություն. - Երևան, 2015. – թ.19. – էջ. 88-93:
3. Սիրականյան Լ.Ն. Ծախսերի կառավարման համակարգ ներդնելու արդյունքում բժշկա-սոցիալական ցուցանիշների միտումները// Բժշկություն գիտություն և կրթություն. - Երևան, 2015. – թ.19. – էջ. 88-93:

ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРЕДПРИЯТИЙ
ВНЕДРЕНИЕМ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ ЗАТРАТАМИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика, управление хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 17-ого июня 2016г. в 15:00 часов на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете по адресу: г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

Резюме

В современной рыночной экономике обеспечение жизнеспособности и конкурентоспособности предприятий в условиях ограниченных ресурсов, стремление к достижению максимальных результатов в условиях быстро меняющейся внешней среды являются серьезным спросом правильного формата и гибкой системы управления затратами.

Целью диссертации является повышение эффективности деятельности предприятий внедрением системы управления затратами. Для достижения этой цели в диссертации предложены и решены следующие задачи:

1. Изучить и оценить место и роль системы управления затратами для повышения эффективности деятельности медицинских учреждений.
2. Анализировать и оценить структуру затрат медицинских учреждений.
3. Изучить и оценить механизмы получения информации о затратах, распределения затрат, анализа, прикрепление к определённой центров ответственности и оценки эффективности по направлениям деятельности.
4. Разработать и научно обосновать методические подходы внедрения разработанной системы управления затратами, разработать теоретические и практические рекомендации по разработке и внедрению системы управления затратами.
5. В целях повышения эффективности деятельности медицинских учреждений разработать систему управления затратами с учетом особенностей медицинских учреждений.
6. Дать оценку эффективности разработанной системы управления затратами на основании результатов сравнительного анализа данных исследования до и после внедрения системы.

Объектом исследования являются медицинские учреждения. Предметом исследования выступают проблемы повышения эффективности деятельности предприятий в условиях современной рыночной экономики.

В первой главе анализированы основные проблемы повышения эффективности деятельности предприятий, проведен анализ научной литературы.

Во второй главе представлены механизмы получения информации о затратах, распределения затрат, анализа, прикрепление к определённой центров ответственности и оценки эффективности по направлениям деятельности, разработаны и научно обоснованы методические подходы внедрения системы управления затратами, разработаны теоретические и практические рекомендации по разработке и внедрению системы управления затратами с учетом особенностей медицинских учреждений.

В третьей главе дана оценка эффективности системы управления затратами на основании результатов сравнительного анализа данных исследования до и после внедрения системы, согласно которому в результате внедрения системы управления затратами зарегистрированы положительные качественные изменения в динамике медико-социальных и экономических показателей эффективности деятельности медицинского учреждения.

Научная новизна исследования:

1. Проведено изучение эффективности деятельности медицинских учреждений, в итоге проведена оценка уровней и тенденций экономических и медико-социальных показателей эффективности деятельности медицинского учреждения.
2. Выявлены особенности управления затратами в медицинских учреждениях связанные с оптимизацией структуры затрат, точностью распределения фактических затрат между структурными подразделениями, целенаправленности приписывания затрат к конкретным подразделениям, подходами расчета себестоимости, управлением и планированием денежных потоков, построением эффективной системой управления затратами.
3. Разработаны и научно обоснованы подходы к внедрению системы управления затратами, дана оценка эффективности системы управления затратами на основании результатов сравнительного анализа данных исследования до и после внедрения системы.

ISSUES OF INCREASING THE EFFICIENCY OF ORGANIZATIONS ACTIVITY VIA
IMPLEMENTATION OF THE COST MANAGEMENT SYSTEM

Abstract of the dissertation submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Economics in the field of 08.00.02 - "Economy, Economics and Management of its Branches."

The defense of the dissertation will take place at 15:00 on June 17, 2016 at the Meeting of Specialized Council 015 of Economics of the Supreme Certifying Commission of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan Street, Yerevan, 0009.

Summary

Ensuring the competitiveness of organizations in the contemporary market economy in the context of limited resources as well as the desire to achieve the maximum result underlies the need for introducing a flexible cost management system in the quickly changing environment.

The purpose of the dissertation is to increase the efficiency of healthcare organizations activity via implementation of the cost management system.

In order to achieve this purpose research problems are posed and solved in the dissertation as follows:

1. Study and evaluate the role of the existing cost management systems in increasing the efficiency of the activity of healthcare organizations,
2. Analyze and assess the cost structure of healthcare institutions,
3. Study and analyze the mechanisms for obtaining information on the expenses of healthcare organizations, their re-distribution and analysis as well as for defining their responsibility and assessing their efficiency according to the directions of the activities,
4. Elaborate and scientifically substantiate the methodological approaches to introducing the cost management system, develop theoretical and practical recommendations on designing and implementing the cost management system,
5. Develop a cost management system for increasing the efficiency of the healthcare organizations activity taking into account their peculiarities,
6. Introduce the assessment of the efficiency of the cost management system prior to and after the implementation of the system, based on the results of a comparative data analysis.

Objects of the research are healthcare organizations. Subjects of the research are the issues of increasing the efficiency of organizations activity in the context of contemporary market economy.

In chapter one the issues of increasing the efficiency of the organizations activity is studied, the analysis of scientific literature has been carried out.

In chapter two the mechanisms for obtaining information on the expenses of healthcare organizations, their re-distribution and analysis as well as for defining their responsibility and assessing their efficiency according to the directions of the activities have been introduced, the sequence of the stages of implementation of the cost management system has been developed and scientifically substantiated, and theoretical and practical recommendations on designing and introducing the cost management system have been developed with the consideration of the peculiarities of healthcare organizations.

In chapter three assessment of the efficiency of the cost management system have developed, prior to and after the implementation of the system, based on the results of a comparative data analysis, has been presented according to which, the introduced cost management system has resulted in positive changes in the dynamics of both medical-social and economic indicators for the healthcare organization efficiency.

Scientific novelty of the research: The scientific novelty novelty of the research can be summed up in the following results:

1. The study of the efficiency of the healthcare organizations activity has been carried out, as a result the levels and trends of the indicators for economic and medical-social efficiency of the activities of a healthcare organization have been assessed.
2. The cost management peculiarities of healthcare organizations have been revealed with respect to optimalization of the structure of costs, the accuracy of distribution of actual costs among the structural subdivisions, the appropriacy of attribution of costs to a specific subdivision, planning and control of monetary flows, building of an efficient system for cost management.
3. Approaches to designing and implementing the system for procedural cost management have been developed and scientifically substantiated, the efficiency of the system for costs procedural management has been assessed based on the comparative analysis of the outcomes of the implementation.

